

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021



CRRC  
Armenia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ամփոփագիր</b>	<b>02</b>
<b>Մեթոդաբանություն</b>	<b>04</b>
<b>Ջարգվածների սոցիալ-տնտեսական նկարագիր</b>	<b>07</b>
<b>Առողջապահություն</b>	<b>10</b>
<b>Էներգետիկա</b>	<b>22</b>
<b>Ղարաբաղյան հակամարտության կարգավորում</b>	<b>31</b>
<b>Կրթություն</b>	<b>40</b>
<b>Եզրակացություններ</b>	<b>48</b>
<b>Ջավելված 1. Պարզ հաճախությունների աղյուսակներ</b>	<b>51</b>

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համար չորս գերակա ոլորտների (առողջապահություն, էներգետիկա, դարաբաղյան հակամարտություն և կրթություն) վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից՝ Սիվիլիթաս հիմնադրամի պատվերով: Տվյալները հավաքագրվել են 2021թ. մարտի 12-ից 24-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսային (CATI) հարցազրույցների միջոցով: Հարցմանը մասնակցել են 18 և բարձր տարիքի 1100 ՀՀ քաղաքացիներ: Չեկույցում ներկայացված են նաև համեմատություններ նույն չորս գերակա ոլորտների վերաբերյալ 2020թ. օգոստոս ամսին իրականացված համանման հետազոտության արդյունքների հետ:

**Առողջապահություն:** Ստացված տվյալների համաձայն, հարցվածների 52%-ը նոր կորոնավիրուսը համարում է սպառնալիք մարդկանց կյանքին: Հարցվածների կեսից ավելին՝ 64%-ը, նշում է, որ արտակարգ դրություն հայտարարելուց ի վեր պահպանում է կորոնավիրուսից պաշտպանվելու կանոնները:

Կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում, հարցվածների կեսից ավելին (59%) կանցնի կորոնավիրուսի թեստ, նույնիսկ եթե այն վճարովի լինի: Այնուամենայնիվ այն հարցվածներից, ովքեր նշում են, որ հիվանդ են եղել կորոնավիրուսով, միայն 22%-ն է վճարովի թեստ հանձնել: Հայաստանում Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի կիրառման պարագայում, հարցվածների 63%-ը անձամբ չի դիմի պատվաստման համար: Պատվաստման համար չդիմելու հիմնական պատճառը պատվաստանյութի հանդեպ անվստահությունն է:

**Էներգետիկա:** Հարցվածների 48%-ն իր տնային տնտեսությունում էներգետիկ ծախսերի հիմնական աղբյուր է համարում կենցաղային էլեկտրասարքերը և 40%-ը՝ ջեռուցման համակարգը: Տնային տնտեսությունների կողմից ջեռուցման համար առավել շատ օգտագործվող էներգիայի աղբյուրը գազն է (60%), որին հաջորդում են փայտը (26%) և էլեկտրականությունը (18%): Գյուղական համայնքներում ջերմություն ստանալու համար առավել հաճախ օգտագործվող վառելանյութը փայտն է:

Վերականգնվող էներգիայի օգտագործման մակարդակը Հայաստանի տնային տնտեսություններում ցածր է. հարցման մասնակիցների 91%-ը չի կիրառում վերականգնվող էներգիայի սկզբունքով աշխատող որևէ սարքավորում: Հարցվածների 42%-ը կարծում է, որ Հայաստանը էներգետիկ անվտանգության խնդիր ունի:

**Ղարաբաղյան հակամարտության կարգավորում:** Հայաստանի չափահաս բնակչության 72%-ը չի հավատում հայերի և ադրբեջանցիների համակեցությանը և ընդամենը 3%-ն է լիովին հավատում դրան: Հարցված հայաստանցիների 36%-ը կարծում է, որ Արցախում նոր պատերազմի բռնկման ռիսկ կա, իսկ 24%-ը ընդհանրապես կարծում է, որ պատերազմը չի ավարտվել: Հարցվածները ղարաբաղյան հակամարտության հետագա կարգավորումը կապում են մի քանի հիմնական դերակատարների հետ, մասնավորապես 35%-ը գտնում է, որ այն կախված է Հայաստանի կառավարությունից, 33%՝ Ռուսաստանի Դաշնության կառավարությունից և 32%-ը՝ համաշխարհային գերտերություններից: Հայաստանցիների գրեթե կեսը (49%) Արցախյան հակամարտության հետագա կարգավորման գործընթացում կարևոր է համարում նաև Մինսկի խմբի գործունեությունը:

Անդրադառնալով Արցախյան հակամարտության վերջնական կարգավորման ձևերին, հարցվածները ամենաընդունելին են համարում Արցախի միացումը Հայաստանին և «Արցախի անկախացումը» տարբերակները: Ինչ վերաբերում է Արցախի տարածքներին, հարցվածների 30%-ը գտնում է, որ Հայաստանի ընդհանուր նպատակը պետք է լինի մինչև պատերազմը եղած բոլոր տարածքների վերադարձը, որին հաջորդում է նախկին ԼՂԻՄ-ի սահմանների վերադարձը (22%): Հայաստանցիների կեսից ավելին՝ 53%-ը լիովին բացասական է վերաբերում Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղիների բացմանը: Մինևույն ժամանակ, հարցվածների 59%-ը գտնում է, որ Մեղրիի միջացնքի գործարկումը վտանգ է ներակայցնում ՀՀ ազգային անվտանգությանը:

**Կրթություն:** Հեռավար դասերին մասնակցած հարցվածները հեռավար կրթության կազմակերպման և օգտվելու ընթացքում ամենաշատը ունեցել են տեխնիկական խնդիրներ, մասնավորապես՝ ինտերնետի բացակայություն/ցածր որակ՝ 34%, և համապատասխան տեխնիկայի կամ այլ գործիքների բացակայություն՝ 20%: Հեռավար դասերին մասնակցած հարցվածների գրեթե կեսը (48%) նշում է, որ դասը/դասախոսությունը հեռավար լինելու պատճառով բովանդակային փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես, հարցվածները նշում են, որ շեշտն ավելի շատ ինքնուրույն աշխատանքի (45%) և որոշ առաջադրանքների կրճատման (40%) վրա է դրվում: Հարցվածների կեսը (49%) հեռավար կրթության մեջ առավելություններ չի տեսնում, իսկ հիմնական թերությունն է համարում կենտրոնացման խնդիրը (39%): Հարցվածների կեսից ավելին (65%) հեռավար կրթությունը չի դիտարկում որպես նոր հմտություններ ստանալու հնարավորություն: Ավելին, հարցվածների 71%-ը չի ցանկանա համավարակից հետո հեռավար կրթության տարրեր տեսնել դասապրոցեսում:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### Հետազոտության հարցաթերթ

ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ հանրային կարծիքի երկրորդ փուլի հետազոտության հարցաթերթը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտական թիմի կողմից՝ հետազոտության առաջին փուլի հարցաթերթի հիման վրա և վերանայվել Սիվիլիթաս հիմնադրամի փորձագետների կողմից: Նախքան տվյալների հավաքագրումը, հարցաթերթը փորձարկել են 4 հարցազրուցավարներ՝ 16 պիլոտային հարցազրույցների միջոցով: Փորձարկման արդյունքում հարցաթերթը լրամշակվել է: Այն ներառում է 53 հարց և կազմված է հետևյալ հինգ բաժիններից՝

- Առողջապահություն,
- Էներգետիկա,
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորում,
- Կրթություն,
- Հարցվածների սոցիալ-տնտեսական նկարագիր:

### Հարցման մեթոդ և դաշտային աշխատանքներ

Դաշտային աշխատանքները սկսվել են 2021 թվականի մարտի 12-ին և տևել 13 օր: Իրականացվել է 1100 հարցազրույց ՀՀ չափահաս բնակիչների շրջանում (95% վստահության սահմաններում 3% սխալի թույլատրելի շեղումով): Հարցվողների հետ կապվելու համար օգտագործվել է պատահական հեռախոսահամարների գեներացման մեթոդը: Իրականացված 14236 հեռախոսազանգերից հարցազրույցով է ավարտվել 21%-ը կամ հաջողված զանգերի 38%-ը (*Աղյուսակ 1*): Հարցազրույցը միջինում տևել է 21 րոպե:

*Աղյուսակ 1. Իրականացված և արդյունավետ զանգերի բաշխումն ըստ բջջային օպերատորների*

	Չանգերի ընդհանուր թիվը	Չստացված զանգերի թիվը*	Հաջողված զանգերի թիվը	Մերժումների թիվը	Կայացած հարցազրույցների թիվը	Հաջողված զանգերը **	Կայացած հարցազրույցները ***
<b>ՎիվաՍել-ՍՏՍ</b>	5002	3238	1122	642	35%	36%	5002
<b>ՎԵՈՆ Արմենիա</b>	5071	4376	421	274	14%	39%	5071
<b>Յուբոմ</b>	4163	3698	281	184	11%	40%	4163

<b>Ընդամենը</b>	<b>14236</b>	<b>11312</b>	<b>1824</b>	<b>1100</b>	<b>21%</b>	<b>38%</b>	<b>14236</b>
-----------------	--------------	--------------	-------------	-------------	------------	------------	--------------

\* Ներառում է այն զանգերը, երբ հնարավոր չի եղել կապ հաստատել, համարը գոյություն չի ունեցել, սխալ է եղել, անջատված է եղել, կամ պարզապես բաժանորդը չի պատասխանել

\*\* Հաջողված զանգերի հարաբերակցությունը զանգերի ընդհանուր թվին

\*\*\* Կայացած հարցազրույցների հարաբերակցությունը հաջողված զանգերի թվին

Դաշտային աշխատանքներին մասնակցել է հեռախոսային հարցումներ իրականացնելու փորձ ունեցող 20 հարցազրուցավար: Մինչ դաշտային աշխատանքների սկիզբը նրանք անցել են 2 ժամ տևողությամբ հրահանգավորում, որի ընթացքում ծանոթացել են հարցաթերթին:

Դաշտային աշխատանքների վերահսկողությունն իրականացրել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի տվյալների հավաքագրման թիմը: Տվյալների հավաքագրումը ենթարկվել է մոնիտորինգի ամենօրյա ռեժիմով: Ստացված հարցազրույցների 10 տոկոսի ձայնագրությունները լսվել են որակի վերահսկման թիմի կողմից: Խնդիրներ բացահայտելու դեպքում, անմիջապես կապ է հաստատվել հարցազրուցավարների հետ և խնդիրն անմիջապես շտկվել է:

Ստորև աղյուսակներում ներկայացված է հարցումների բաշխումն ըստ ընտրանքի քվոտաների (սեռ, տարիք, բնակավայրի տեսակ):

*Աղյուսակ 2: Քվոտաների բաշխումը ըստ բնակության վայրի*

<i>Բնակության վայր</i>	<b>Պլանավորված ըստ ընտրանքի</b>	<b>Արդյունքում ստացված</b>
<b>Մայրաքաղաք</b>	37%	37%
<b>Այլ քաղաքներ</b>	27%	33%
<b>Գյուղական բնակավայրեր</b>	35%	30%

*Աղյուսակ 3: Քվոտաների բաշխումն ըստ սեռի*

<i>Սեռ</i>	<b>Պլանավորված ըստ ընտրանքի</b>	<b>Արդյունքում ստացված</b>
<b>Տղամարդ</b>	45%	45%
<b>Կին</b>	55%	55%

*Աղյուսակ 4: Քվոտաների բաշխումն ըստ տարիքի*

<i>Տարիք</i>	<b>Պլանավորված ըստ ընտրանքի</b>	<b>Արդյունքում ստացված</b>
<b>18-35 տ.</b>	36%	40%
<b>36-55 տ.</b>	33%	34%
<b>56 + տ.</b>	31%	26%

Աղյուսակ 5: Քվոտաների բաշխումն ըստ բնակության վայրի և սեռի

		Պլանավորված ըստ ընտրանքի	Արդյունքում ստացված
<b>Մայրաքաղաք</b>	<b>Տղամարդ</b>	17%	13%
	<b>Կին</b>	20%	17%
<b>Այլ քաղաքներ</b>	<b>Տղամարդ</b>	12%	15%
	<b>Կին</b>	15%	18%
<b>Այլ քաղաքներ</b>	<b>Տղամարդ</b>	16%	16%
	<b>Կին</b>	19%	21%


Ինչպես երևում է վերոբերյալ աղյուսակներից, պատահականության սկզբունքով ստացված ընտրանքային համամասնությունները (ըստ սեռի, տարիքային խմբերի և բնակավայրի տեսակի) որոշ կատեգորիաների դեպքում մի փոքր շեղված են պլանավորվածից, այդ իսկ պատճառով տվյալները կշռվել են հիմնվելով հետստրատիֆիկացիոն կշիռների վրա ըստ սեռի, տարիքի և բնակավայրի տիպի: **Չետագոտության արդյունքները ներկայացված են կշռված տվյալների հիման վրա:**

*Ծանոթություն 1. գծապատկերներում, եթե այլ նշում չկա, բերված են բոլոր պատասխանները՝ արտահայտված տոկոսներով ամբողջի մեջ: Այն դեպքերում, երբ հարցվածները հնարավորություն են ունեցել տալու մեկից ավելի պատասխան, տոկոսների հանրագումարը գերազանցում է հարյուրը, ինչը հարցադրման և հաշվարկի առանձնահատկությունն է, ոչ թե թվաբանական սխալ: Չեկույցում ներկայացված որոշ գծապատկերների տոկոսների հանրագումարի 1% շեղումը 100%-ից պայմանավորված է տոկոսների կլորացված ներկայացմամբ:*

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցման մասնակիցների 55%-ը կազմել են կանայք, 45%-ը՝ տղամարդիկ: Հարցվածների շրջանում 18-35 տարիքային խմբի ներկայացուցիչները կազմել են 35%, 36-55 տարեկանները՝ 33% և 56+ տարիքային խմբի հարցվածները՝ 32%: Երևանից և գյուղական համայնքներից հարցվածների բաժինը գրեթե նույնն է՝ 37% և 36% համապատասխանաբար: Այլ քաղաքային համայնքներից հարցվածները կազմել են 27%: Հարցման մասնակիցների կեսից ավելին (69%) ամուսնացած է եղել (*Գծապատկեր 1.1*):

**Գծապատկեր 1.1. Հարցվածների բաշխումն ըստ սեռի, տարիքի, ընտանեկան կարգավիճակի և բնակավայրի տիպի**  
n = 1100






Ինչպես երևում է *Գծապատկեր 1.2-ից*, հարցվածների 41%-ն ունի բարձրագույն կրթություն, որից 4%-ը՝ թերի բարձրագույն կրթություն և 1%՝ հետբուհական գիտական աստիճան, 29%-ը՝ լրիվ միջնակարգ կրթություն, իսկ միջնակարգ տեխնիկական կրթություն ունեցող հարցվածների բաժինը կազմել է 22%:

### Գծապատկեր 1.2. Ո՞րն է Ձեր ամենաբարձր կրթամակարդակը


n = 1100



Հարցման մասնակիցների կեսը (51%) ունի աշխատանք, մասնավորապես, 41%-ն ունի ամբողջ դրույթով աշխատանք, ներառյալ՝ ինքնազբաղվածությունը, իսկ 10%-ն աշխատում է կես դրույթով, ներառյալ՝ ինքնազբաղվածությունը: Հարցվածների 11%-ը չի աշխատում և փնտրում է աշխատանք, իսկ 9%-ը չի աշխատում բայց չի էլ փնտրում աշխատանք: (*Գծապատկեր 1.3*):

### Գծապատկեր 1.3. Ձեր զբաղվածության կարգավիճակը


n = 1100



Հայաստանի տնային տնտեսությունները հիմնականում բաղկացած են 4-5 անդամից: Համաձայն *Գծապատկեր 1.4-ի*, հարցվածների 38%-ը նշել է, որ տնային տնտեսության գումարը հիմնականում բավարար է սննդի ու հագուստի համար, բայց ոչ թանկարժեք ապրանքների համար: Հարցվածների 25%-ի համար գումարը բավարար է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար, իսկ 14%-ը չունի բավարար գումար նույնիսկ սննդի համար: Հարցվածների միայն 18%-ի համար է գումարը բավարար թանկարժեք կենցաղային տեխնիկա և ցանկալի այլ բաներ գնելու համար:

**Գծապատկեր 1.4. Այս իրավիճակներից ո՞րն է առավել լավ բնութագրում Ձեր տնային տնտեսության ներկայիս տնտեսական վիճակը**

n = 1100




# ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ



## ԲԱԺԻՆ 2. ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Չայաստանցիների 52%-ը համարում է, որ նոր տեսակի կորոնավիրուսը գլոբալ հավարակ է և սպառնալիք միլիոնավոր մարդկանց կյանքի և առողջության համար: Ընդ որում, իգական սեռի ներկայացուցիչները 58%-ն է այդպես կարծում, իսկ արական սեռի ներկայացուցիչների՝ 44%-ը<sup>1</sup>: Իսկ 2020թ. օգոստոս ամսին իրականացված հետազոտության արդյունքների համաձայն մարդկանց ավելի քիչ տոկոսն էր (44%) այդպես կարծում: Մինևույն ժամանակ, հարցվածների 8%-ը նշել է, որ նոր տեսակի կորոնավիրուսը հորինված է լրատվամիջոցների և հասարակական գործիչների կողմից և 7%-ը բավարար տեղեկատվություն չունի, որպեսզի կողմնորոշվի: (Գծապատկեր 2.1):

### Գծապատկեր 2.1. Թվարկվածներից ո՞րն է առավելապես արտահայտում Կորոնավիրուսի վերաբերյալ Ձեր կարծիքը n = 1100 (2020թ. և 2021թ.)




<sup>1</sup>  $\chi^2$  (df =4, N= 1100) = 43.435, p=.000

Համաձայն *Գծապատկեր 2.2-ի*, հարցման մասնակիցների 39%-ը գտնում է, որ համավարակի տարածման ընթացքում կառավարության գործունեությունը արդյունավետ է եղել, որից 16%-ը գտնում է, որ՝ շատ արդյունավետ: Ընդ որում, առկա է վիճակագրորեն նշանակալի տարբերություն ըստ կրթության մակարդակի. բարձրագույն կրթություն ունեցողների միայն 10%-ն է կարծում, որ կառավարության գործունեությունը եղել է շատ արդյունավետ, մինչդեռ միջնակարգ կրթություն ունեցողների 20%-ն է շատ արդյունավետ գնահատում կառավարության գործունեությունը<sup>2</sup>: Միևնույն ժամանակ, հայաստանցիների մոտ մեկ հինգերորդը (21%) նշել է, որ կառավարության գործունեությունը ընդհանրապես անարդյունավետ է, իսկ հարցվածների 8%-ը դժվարանում է գնահատական տալ:

**Գծապատկեր 2.2. Ինչպե՞ս կրկնազրեք կառավարության գործունեությունը համավարակի տարածման ընթացքում**

n = 1100




Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 2.3-ը*, հարցված հայաստանցիներն ամենաշատը բավարարված են հիվանդանոցների աշխատանքով՝ կապված Կորոնավիրուսի դեմ պայքարի հետ (64%), որին հաջորդում են դպրոցները/մանկապարտեզները (62%) և պոլիկլինիկաները (59%): Կորոնավիրուսի դեմ պայքարի հարցում ՀՀ Առողջապահության նախարարության աշխատանքով բավարարված է հարցվածների 54%-ը, մինչդեռ առաջին փուլի հարցման արդյունքների համաձայն 68%-ն էր բավարարված ՀՀ Առողջապահության

<sup>2</sup>  $\chi^2$  (df = 18, N = 1100) = 56.427, p = .000


Նախարարության աշխատանքով: Հարցվածների 35%-ը դժվարանում է պատասխանել Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կորոնավիրուսի դեմ պայքարի աշխատանքից բավարարվածության վերաբերյալ հարցին:

**Գծապատկեր 2.3. Բավարարված եք արդյոք հետևյալ հաստատությունների ծառայությունների մատուցմամբ/ սահմանափակումների վերահսկումով՝ կապված Կորոնավիրուսի դեմ պայքարի հետ**  
n = 1100



Հարցման մասնակիցների մոտ երկու երրորդը (63%) Հայաստանում կորոնավիրուսի տարածմանը վերաբերող հիմնական տեղեկատվությունն ստանում է հեռուստացույցով, ռադիոյով և տպագիր մամուլով: Հարցվածների 41%-ն այդ տեղեկատվությունը ստանում է ինտերնետից (լրատվակայքեր, թերթերի կայքեր և սոցցանցերում դրանց էջեր): Վարչապետի, առողջապահության նախարարի, այլ պաշտոնատար անձանց էջերից տեղեկատվություն ստանում է միայն 14%-ը, որը ի համեմատ 2020թ. օգոստոսին իրականացված հետազոտության տվյալների նվազել է 13 տոկոսային կետով: Հարցման մասնակիցների 4%-ը նշել է, որ չի հետևում Հայաստանում կորոնավիրուսի տարածման հետ կապված տեղեկատվությանը (Գծապատկեր 2.4):


**Գծապատկեր 2.4. Որտեղի՞ց եք ստանում ճայաստանում Կորոնավիրուսի հետ կապված հիմնական տեղեկատվությունը:** (Բազմակի պատասխաններով հարց: Չարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n = 1100



Չարցված հայաստանցիների կեսից ավելին (66%) հայաստանյան բժիշկների և փորձագետների կողմից տրվող տեղեկատվությունը համարում է կորոնավիրուսի վերաբերյալ տեղեկատվական ամենավստահելի աղբյուրը: Ընդ որում, վերջիններիս տված տեղեկատվությանը լիովին վստահում է հարցվածների 45%-ը: ԶԶ Առողջապահության նախարարության և այլ պետական գերատեսչությունների պաշտոնական հաղորդագրություններին վստահում է հարցվածների 44%-ը: Չարցման մասնակիցների գրեթե կեսը (45%) ընդհանրապես չի վստահում քաղաքական գործիչների և լրագրողների կողմից արված հայտարարություններին (Գծապատկեր 2.5):

**Գծապատկեր 2.5. Նշեք խնդրեմ, Կորոնավիրուսի հետ կապված հետևյալ տեղեկատվական աղբյուրների նկատմամբ Ձեր վստահության աստիճանը 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես չեմ վստահում, իսկ 5-ը՝ լիովին վստահում եմ:**

n = 1100




Չարցված հայաստանցիների կեսից ավելին՝ 64%-ը, նշում է, որ պահպանում է կորոնավիրուսից պաշտպանվելու կանոնները, մասնավորապես կրում է դիմակ, պահում է անհրաժեշտ հեռավորությունը և այլն: Չարցվածների 2%-ը հայտնել է, որ կանոնները պահպանելու հնարավորություն չունի, իսկ 11%-ը (2020թ. օգոստոսին՝ 4%) դրա անհրաժեշտությունը չի տեսնում (Գծապատկեր 2.6):



**Գծապատկեր 2.6. Դուք պահպանում եք կորոնավիրուսից պաշտպանվելու կանոնները՝ դիմակ կրել, հեռավորություն պահել և այլն**


n = 1100



Հարցվածների գրեթե մեկ քառորդը (23%) նշում է, որ հիվանդացել է կորոնավիրուսով, իսկ 5%-ը դժվարանում է պատասխանել այդ հարցին: Այնուամենայնիվ, այն հարցվածներից, ովքեր նշում են, որ հիվանդացել են կորոնավիրուսով, միայն 58% է թեստ հանձնել, որից 36%-ը եղել է անվճար թեստավորում: Ավելի հաճախ թեստ հանձնել են 56+ տարեկանները ի տարբերություն 18-35 տարեկանների (համապատասխանաբար՝ 68% և 46%)<sup>3</sup>:


**Գծապատկեր 2.7. Անձամբ Դուք հիվանդացե՞լ եք կորոնավիրուսով**

n = 1100



**Գծապատկեր 2.8. Անցե՞լ եք կորոնավիրուսի թեստ, երբ հիվանդ էիք կորոնավիրուսով**

n = 259




<sup>3</sup>  $\chi^2$  (df =6, N= 1100) = 18.427, p=.005

Չարցվածների 39%-ը գնացել է պոլիկլինիկա կամ հիվանդանոց, երբ իմացել է, որ հիվանդ է կորոնավիրուսով, իսկ 21%-ը զբաղվել է ինքնաբուժությամբ (*Գծապատկեր 2.9*): Չետաքրքրական է, որ կորոնավիրուսով հիվանդ լինելու դեպքում չարցվածների գործողությունները չեն տարբերվում ըստ սեռի, տարիքի, բնակության վայրի և կրթության մակարդակի:

**Գծապատկեր 2.9. Ինչպե՞ս եք վարվել, երբ հիվանդ եք եղել կորոնավիրուսով**


(Բազմակի պատասխաններով հարց: Չարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)

n = 259




Չարցվածների 35%-ը հայտնել է, որ կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում առաջին հերթին կգնա պոլիկլինիկա կամ հիվանդանոց, իսկ 23%-ը՝ կինքնամեկուսանա: Չարցվածների միայն 14%-ն է նշում, որ կգանգի պոլիկլինիկա, թե՛ժ գիծ, հիվանդանոց կամ շտապօգնություն (*Գծապատկեր 2.10*):

**Գծապատկեր 2.10. Առաջին հերթին ինչպե՞ս կվարվեք, եթե կասկածեք, որ հիվանդացել եք կորոնավիրուսով**  
 2020թ. (n=1067), 2021թ. (n=841)



Հարցվածների ճնշող մեծամասնությունը (71%) հայտնել է, որ նոր կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում կանցնի կորոնավիրուսի թեստ, ընդ որում 59%-ը կանցնի, նույնիսկ եթե թեստը վճարովի լինի (Գծապատկեր 2.11): Հարցման մասնակիցների 16%-ը չի վստահում թեստավորմանը և թեստ չի հանձնի:


**Գծապատկեր 2.11. Կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում կանցնե՞ք կորոնավիրուսի թեստ**  
 n = 841



Ըստ *Գծապատկեր 2.12*-ի, հարցված հայաստանցիների կեսից ավելին (63%) անձամբ չեն դիմի պատվաստման համար, երբ Հայաստանում սկսվի պատվաստանյութերի կիրառումը (*Գծապատկեր 2.12*): Հետաքրքիր է, որ կանայք ավելի քիչ են հակված պատվաստվելու (21%) քան տղամարդիկ (33%)<sup>4</sup>: Պատվաստվելու պատրաստակամության հարցում վիճակագրորեն նշանակալի տարբերություն կա նաև ըստ տարիքային խմբերի: Այսպես, երիտասարդներն ավելի քիչ են հակված անձամբ դիմելու պատվաստման համար (20%), քան 56+ տարիքային խմբի հարցվածները (38%)<sup>5</sup>: Միևնույն ժամանակ, 11%-ը այդ հարցին դժվարանում է պատասխանել:

**Գծապատկեր 2.12. Այն պահին, երբ Հայաստանում սկսվի պատվաստանյութերի կիրառումը, Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար**

n = 1100 (2020թ. և 2021թ.)




Հայաստանում կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի կիրառման դեպքում պատվաստվելու մտադրություն ունեցողների գրեթե կեսը՝ 44%-ը կնախընտրի Սպուտնիկ V-ն, 21%-ի համար տարբերություն չկա, կարևորը պատվաստվելն է, իսկ 27%-ը դժվարանում է պատասխանել (*Գծապատկեր 2.13*):

<sup>4</sup>  $\chi^2$  (df =3, N= 1100) = 26.189, p=.000


<sup>5</sup>  $\chi^2$  (df =6, N= 1100) = 34.786, p=.000

**Գծապատկեր 2.13. Իսկ եթե Ձեր ընտրությամբ լինեի, որ պատվաստանյութը կնախընտրեիք**  
n = 288



Հայաստանում կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի կիրառման դեպքում պատվաստվելու մտադրություն ունեցողների ճշող մեծամասնությունը (78%) պատվաստվել ցանկանում է հիվանդանալու վտանգից ապահովագրվելու նպատակով, մինչդեռ նրանցից 19%-ի կարծիքով, պատվաստումը կլինի պարտադիր բոլորի համար (Գծապատկեր 2.14):

**Գծապատկեր 2.14. Այն պահին, երբ Հայաստանում սկսվի պատվաստանյութերի կիրառումը, Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար: Եթե այո, ապա ինչու**  
n = 288




Ինչպես երևում է *Գծապատկեր 2.15-ից*, հարցվածների 53%-ը չի պատրաստվում դիմել պատվաստման համար, քանի որ ընդհանրապես չի վստահում պատվաստանյութերին: Չետաքրքական է, որ նախորդ փուլի հետազոտության արդյունքների համեմատ, անվստահությունը պատվաստանյութերի նկատմամբ բարձրացել է 9 տոկոսային կետով: Պատվաստվելու մտադրություն չունեցողների ևս 43%-ը չի դիմի պատվաստման համար մինչև չլինեն տվյալ պատվաստանյութի անվտանգության երաշխիքները:


**Գծապատկեր 2.15. Այն պահին, երբ Չայաստանում սկսվի պատվաստանյութերի կիրառումը, Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար:**

**Եթե ոչ, ապա ինչու՞**

n = 692



# ԷԼԵՐԳԵՏԻԿԱ




## ԲԱԺԻՆ 3. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Համաձայն *Գծապատկեր 3.1-ի*, 2021 թվականին հարցվածների 45%-ը նշում է, որ տնային տնտեսության էներգիայի սպառման ծախսը շատ չի տարբերվում այլ տնային տնտեսությունների համեմատ, 25%-ի գնահատականով իրենց տնային տնտեսության ծախսն ավելի շատ է և միայն հարցվածների 11%-ն է նշում, որ այն ավելի քիչ է:

### Գծապատկեր 3.1. Ձեր կարծիքով, Ձեր ընտանիքի էներգիայի (գազ, էլեկտրաէներգիա) ծախսը, հարևանների/մտերիմների ընտանիքների համեմատ...

n=1100




Հարցման ընթացքում անդրադարձ է կատարվել էներգետիկ ծախսերի կրճատմանն ուղղված քայլերին: Համաձայն *Գծապատկեր 3.2-ի*, հարցվածների միայն 42%-ն է նշում, որ երբևէ մտածել է որևէ բան ձեռնարկել կացարանի էներգետիկ ծախսերը կրճատելու ուղղությամբ: Ընդ որում, պատկերը նույնն է անկախ հարցվածների տնտեսական կարգավիճակից, տարիքից կամ բնակավայրի տեսակից:




**Գծա3.2. Երբևէ մտածե՞լ եք որևէ բան ձեռնարկել Ձեր կացարանի Էներգետիկ ծախսերը կրճատելու համար**

n=1100




Հարցման մասնակիցների 48%-ը նշում է, որ իր տնային տնտեսությունում Էներգետիկ ծախսերի հիմնական աղբյուրը կենցաղային Էլեկտրասարքերն են, 40%-ը՝ ջեռուցման համակարգը, և 19%-ը՝ լուսավորող սարքերը: Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 3.3-ը*, 2020 թվականի տվյալների համեմատ, ավելացել է այն հարցվածների բաժինը, ովքեր նշել են կենցաղային Էլեկտրասարքերը և ջերմության արտահոսքը պատերից, և համապատասխանաբար նվազել այլ տարբերակների բաժինը, ինչը պայմանավորված է սեզոնային փոփոխությամբ (2020 թ.-ի տվյալները հավաքագրվել են օգոստոս ամսին):

**Գծապատկեր 3.3. Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր ընտանիքի էներգետիկ ծախսերի գոյացման հիմնական աղբյուրները** (Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n=1100




Տնային տնտեսությունների կողմից կացարանը ջեռուցելու համար առավել շատ օգտագործվող էներգիայի աղբյուրը հանդիսանում է գազը. հարցվածների 60%-ը նշում է, որ օգտագործում է գազով ջեռուցման կաթսա, 26%-ը նշում է, որ օգտագործում է փայտ, 18%-ը՝ էլեկտրական տաքացուցիչներ (*Գծապատկեր 3.4*): Գյուղական համայնքներում փայտը նշվել է որպես առավել հաճախ օգտագործվող վառելանյութ ջերմություն ստանալու համար (50%): Երկրորդ տեղում գազն է (40%), որին հաջորդում է գոմաղբը (16%): Երևանում ջեռուցման համար փայտանյութ սպառում է հարցվածների 3%-ը, իսկ գազով ջեռուցման կաթսաներ օգտագործում են 75%-ը: Եթե էլեկտրական տաքացուցիչներ օգտագործում են Երևանի բնակիչների 25%-ը, ապա գյուղական համայնքներում այս ցուցանիշը 13% է (*Գծապատկեր 3.5*):

**Գծապատկեր 3.4. Ինչպե՞ս եք ջեռուցում Ձեր կացարանը**  
 (Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/վ կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են):  
 n=1100




**Գծապատկեր 3.5. Ինչպե՞ս եք ջեռուցում Ձեր կացարանը**  
 (Ըստ բնակավայրի տեսակի, հարցվողներն ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են):  
 n=1100




2020 թվականին հարցման մասնակիցների մեծամասնությունը ևս նշել էր, որ երբևէ չի մտածել իր կացարանի էներգետիկ ծախսերը կրճատելու մասին (*Գծապատկեր 3.2*), սակայն երեք քառորդից ավելին (77%) ցուցակից ընտրել է առնվազն մեկ միջոցառում, որն իրականացրել է իր կացարանում ծախսերի կրճատման ուղղությամբ: Ըստ 2021 թվականի տվյալների, տնային տնտեսությունների 58%-ն իրականացրել է պատուհանների փոխարինում, 46%-ը՝ դռների փոխարինում, 37%-ը՝ լամպերի փոխարինում, իսկ 30%-ը՝ կենցաղային էլեկտրասարքավորումների փոխարինում: Պատերի ջերմամեկուսացում իրականացրել է հարցվածների 19%-ը (*Գծապատկեր 3.6*):

**Գծապատկեր 3.6. Ստորև նշված միջոցառումներից որո՞նք եք իրականացրել Ձեր կացարանում** (Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /երեք 2/4 կարդացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n=1100



Պատկերը, սակայն, տարբեր է ըստ բնակավայրի տիպի, երևանում որոշ դեպքերում զգալի տոկոսային առավելությամբ: Համաձայն ստորև ներկայացված գծապատկերի, լամպերի փոխարինում գյուղական համայնքներում իրականացրել է հարցվածների 29%-ը, մինչդեռ երևանում՝ 49%: Չգալի է տարբերությունը նաև ջեռուցման համակարգի և կենցաղային սարքերի արդիականացման դեպքում. երևանում այդ գործողությունները նշել է հարցվածների 37%-ը, իսկ գյուղական համայնքներում՝ համապատասխանաբար 16% և 24%-ը (*Գծապատկեր 3.7*):


**Գծապատկեր 3.7. Ստորև նշված միջոցառումներից որո՞նք եք իրականացրել Ձեր կացարանում** (Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարդացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n=1100



Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 3.8*-ը, հարցվածների 44%-ի կարծիքով, տանը էներգիա խնայելու համար հարկավոր է անջատել ոչ անհրաժեշտ լուսավորությունը, 43%-ի կարծիքով՝ անջատել չգործածվող էլեկտրասարքերը, իսկ 31%-ի կարծիքով՝ նվազեցնել գերջեռուցումը/գերհովաացումը: Ինչ վերաբերում է վերջինին, 2020 թվականի համեմատ տարբերությունը նույնպես կարող է բացատրվել սեզոնի փոփոխմամբ:

**Գծապատկեր 3.8. Նշված գործողություններից ո՞րը կնպաստի Ձեր տանը  
Էներգիա խնայելուն**


(Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n=1100



Վերականգնվող էներգիայի սկզբունքով աշխատող սարքերի օգտագործման վերաբերյալ հարցման մասնակիցների 91%-ը նշել է, որ իրենց տնային տնտեսությունում չեն կիրառում որևէ սարքավորում: Հարցվածների 6%-ը (նրանց մեծ մասը՝ մարզային համայնքներում) նշել է, որ կիրառում է արևային ջրատաքացուցիչ, իսկ մեկական տոկոսը՝ կենսազազի ստացման սարք, արևային ֆոտոէլեկտրական վահանակ և ջերմային պոմպ (Գծապատկեր 3.9):


**Գծապատկեր 3.9. Ձեր տնային տնտեսությունում վերականգնվող էներգիայի  
սկզբունքով աշխատող ո՞ր սարքավորումներն եք կիրառում**

(Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n=1100




2021 թվականին հարցվածների 42%-ը նշում է, որ Հայաստանն ունի էներգետիկ անվտանգության խնդիր, իսկ 23%-ը չգիտի, թե ինչ է «էներգետիկ անվտանգությունը»: (Գծապատկեր 3.10): Ընդ որում, այս հարաբերակցությունը տարբերվում է ըստ բնակավայրի տիպի (Երևանում հարցվածների 49%-ն է սվեյդրական պատասխան, գյուղական համայնքներում՝ 32%-ը) և ըստ սեռի (կանանց 18%-ը կարծում է, որ անվտանգության խնդիր չկա, իսկ 27%-ը չգիտի դա ինչ է, մինչդեռ տղամարդկանց դեպքում դա 30% և 20% է, համապատասխանորեն): Տարիքը և կրթությունը նույնպես դրականորեն են ազդում այս հարցի շուրջ հարցվածների «Այո» պատասխանների բաժնի վրա. որքան բարձր է հարցվողի տարիքը և կրթամակարդակը, այնքան ավելի բարձր է Հայաստանի էներգետիկ անվտանգության խնդրի ընկալումը:

**Գծապատկեր 3.10. Ձեր կարծիքով, Հայաստանը էներգետիկ անվտանգության խնդիր ունի՞**  
n=1100



ՂԱՐԱԲԱՂՅԱՆ  
ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ






## ԲԱԺԻՆ 4. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հարցվածների 36%-ը կարծում է, որ Արցախում նոր պատերազմի բռնկման ռիսկ կա: 18%-ը կարծում է, որ պատերազմի բռնկումը տեղի կունենա մեկ տարվա ընթացքում, իսկ 13%-ը՝ հինգ տարիների ընթացքում: Մինևույն ժամանակ, հայաստանցիների գրեթե մեկ քառորդը (24%) համարում է, որ պատերազմը չի ավարտվել: *Գծապատկեր 4.1*-ը ցույց է տալիս, որ հարցվածների 22%-ը չի տեսնում նոր պատերազմի բռնկման ռիսկ, իսկ 16%-ը՝ դժվարանում է պատասխանել:


**Գծապատկեր 4.1. Տեսնում եք Արցախում նոր պատերազմի բռնկման ռիսկ**  
n=1100




Չափահաս հայաստանցիների մոտ կեսը՝ 53%-ը, վստահում է ռուս խաղաղապահ ուժերին: Ընդ որում, հարցվածների 28%-ը պատասխանել է «լիովին վստահում եմ», իսկ 25%-ը՝ «հիմնականում վստահում եմ»: Նշված ուժերին չեն վստահում հարցվածների մեկ քառորդը (25%) (*Գծապատկեր 4.2*):

Մինևույն ժամանակ, հայաստանցիների 47%-ը կարծում է, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ին հրապարակված եռակողմ հայտարարության հնգամյա ժամկետի լրանալուց հետո ռուս խաղաղապահ ուժերը կշարունակեն աշխատել Արցախում: Համաձայն *Գծապատկեր 4.3-ի*՝ 35%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

**Գծապատկեր 4.2. Որքանով եք վստահում ռուս խաղաղապահ ուժերին՝ Արցախի անվտանգության ապահովման հարցում**  
n=1100




**Գծապատկեր 4.3. Ըստ Ձեզ, կշարունակե՞ն ռուս խաղաղապահ ուժերը աշխատել Արցախում նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության հնգամյա ժամկետը լրանալուց հետո**  
n=1100



ՀՀ չափահաս բնակչությունը դարաբաղյան հակամարտության հետագա կարգավորումը կապում է մի շարք դերակատարների հետ: Հարցվածների 35%-ի կարծիքով այդ դերակատարը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությունն է, իսկ 33%-ը կարծում է, որ հետագա կարգավորումը կախված է Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարությունից, իսկ 32%-ը՝ համաշխարհային գերտերություններից (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, ԵՄ): Գծապատկեր 4.4-ը ցույց է տալիս, որ նշված վերջին երկու դերակատարները հետպետարգմական ժամանակահատվածում ավելի մեծ կարևորություն են ձեռք

բերել հասարակության շրջանում: Մինչպատերազմական Հայաստանում հարցվածների 21%-ն էր նշում «ՌԴ կառավարությունից» տարբերակը, մինչդեռ հետպատերազմական ժամանակահատվածում այդ թիվը հասել է 33%-ի: Հետաքրքրական է նաև, որ 2021թ. տվյալների համաձայն «Ադրբեջանի կառավարություն» տարբերակը նշում են 15%-ը, մինչդեռ 2020թ. 31%-ն էր ընտրել այս տարբերակը:


**Գծապատկեր 4.4 Ձեր կարծիքով, դարաբաղյան հակամարտության հետագա կարգավորումը կախված է...:** (Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարողացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:) n= 1100



Առանձին հարց է ուղղվել նաև Արցախյան հակամարտության հետագա կարգավորման հարցում Մինսկի խմբի դերակատարության վերաբերյալ, որին «Ճատ կարևոր է» պատասխանը տվել են հայաստանցիների 29%-ը, իսկ «ավելի շուտ կարևոր»՝ 20%-ը: Մինևույն ժամանակ, հարցվածների 21%-ը ընդհանրապես կարևոր չի համարում ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը: Հարկ է նշել, որ


բնակչության 19%-ը դժվարացել է որևէ պատասխան տալ (*Գծապատկեր 4.5*):  
 Համաձայն *Գծապատկեր 4.6-ի*, հարցվածների 40%-ը կարծում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է շատ ներգրավված լինի Արցախյան հակամարտության վերջնական կարգավորման մեջ:

**Գծապատկեր 4.5. Ինչպե՞ս եք գնահատում Մինսկի խմբի գործունեության կարևորությունը Արցախյան հակամարտության հետագա կարգավորման գործընթացում**  
 n=1100



Հարցվածների 69%-ը կարծում է, որ ՌԴ-ն պետք է շատ ներգրավված լինի Արցախյան հակամարտության վերջնական կարգավորման մեջ, 49%-ը համարում է, որ Ֆրանսիան պետք է շատ ներգրավված լինի այդ գործում, իսկ 82%-ը նշում է, որ Թուրքիան պետք է ընդհանրապես ներգրավված չլինի կոնֆլիկտի վերջնական կարգավորման մեջ:

**Գծապատկեր 4.6. Ըստ Ձեզ, հետևյալ երկրներից և կազմակերպություններից յուրաքանչյուրն արդյո՞ք պետք է շատ ներգրավված լինի, քիչ ներգրավված, թե ընդհանրապես պետք է ներգրավված չլինի Լեռնային Ղարաբաղի/Արցախի կոնֆլիկտի վերջնական կարգավորման հարցում**  
 n=1100




■ Պետք է շատ ներգրավված լինի ■ Պետք է քիչ ներգրավված լինի ■ Պետք է ընդհանրապես ներգրավված չլինի ■ ԴՊ ■ ՀՊ

Չափահաս հայաստանցիների ճնշող մեծամասնությունը՝ 78%-ը, որպես հակամարտության հետագա կարգավորման առաջին քայլ նշում է «գերիների վերադարձը, ապա մնացածը» պատասխանը: Այլ պատասխանները՝ ներառյալ Արցախի կարգավիճակի հստակեցումը, ներկայիս սահմանների և բնակչության անվտանգության ապահովումը ստացել են 5% և ավելի քիչ պատասխաններ (Գծապատկեր 4.7):

#### Գծապատկեր 4.7. Ղարաբաղյան հակամարտության հետագա կարգավորման առաջին քայլը պետք է լինի ...

n=1100




Անդրադառնալով Արցախյան հակամարտության վերջնական կարգավորման ձևերին՝ հարցվածների 35%-ը որպես առաջին պատասխան նշում է «Արցախի միացումը Հայաստանին» տարբերակը, ևս 35%-ը՝ «Արցախի անկախացումը» տարբերակը: Որպես երկրորդ նախընտրելի տարբերակ ամենաշատը՝ 39%, ստացել է ՌԴ կազմում Արցախին հատուկ կարգավիճակ շնորհելու պատասխանը (Գծապատկեր 4.8):

Ինչ վերաբերում է Արցախի տարածքների հարցում Հայաստանի ընդհանուր նպատակին, ապա չափահաս Հայաստանցիների 30%-ը կարծում է, որ դա պետք է թիրախավորել մինչպատերազմական Արցախի բոլոր տարածքները, 22%-ը համարում է, որ այդ նպատակը պետք է լինի նախկին ԼՂԻՄ սահմանների վերադարձը, իսկ ևս 20%-ի կարծիքով՝ ներկայիս սահմանների պահպանումը:

Հարցվածների մեկ քառորդը դժվարանում կամ հրաժարվում է պատասխանել այս հարցին (Գծապատկեր 4.9):


**Գծապատկեր 4.8. Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ Լեռնային Ղարաբաղի/Արցախի հակամարտության վերջնական կարգավորման վերաբերյալ: Ասեք խնդրեմ՝ հետևյալ մոտեցումներից ո՞րոնք են ընդունելի Ձեզ համար**

n=1100




**Գծապատկեր 4.9 Ըստ Ձեզ, ո՞րը պետք է լինի Հայաստանի ընդհանուր նպատակը Արցախի տարածքների հարցում**

n=1100




Ինչ վերաբերում է 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ կարգավորվող Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղիների բացմանը, ապա հարցվածների 53%-ը խիստ բացասական և ևս 11%-ը՝ հիմնականում բացասական է վերաբերում դրան: Հայաստանցիների միայն 4%-ն է լիովին դրական վերաբերում տրանսպորտային ուղիների բացմանը (Գծապատկեր 4.10):

**Գծապատկեր 4.10 Ինչպե՞ս եք վերաբերում մեր տարածաշրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղիների բացմանը**  
n=1100



Հարցվածների 59%-ը նշում է, որ Մեդրիի միջանցքի գործարկումը վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը, իսկ 12%-ի կարծիքով այն ավելի շատ տնտեսական զարգացման հիմքեր է ստեղծում: Չափահաս հայաստանցիների 20%-ը դժվարացել կամ հրաժարվել է պատասխանել այս հարցին: (Գծապատկեր 4.11)


**Գծապատկեր 4.11 Հիմա կկարդամ երկու պնդում, խնդրում եմ նշել՝ որի հետ եք ավելի շատ համաձայն**  
n=1100



Հաշվի առնելով Արցախյան երկրորդ պատերազմը՝ Հայաստանի չափահաս բնակչության 72%-ը չի հավատում հայերի և ադրբեջանցիների համակեցությանը և ընդամենը 3%-ն է լիովին հավատում այս մտքին: (Գծապատկեր 4.12)

**Գծապատկեր 4.12 Որքանով եք հավատում հայերի ու ադրբեջանցիների համակեցությանը (համատեղ բնակությանը)՝ հաշվի առնելով Արցախյան երկրորդ պատերազմը**

n=1100






# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



## ԲԱԺԻՆ 5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ


Ըստ *Գծապատկեր 5.1-ի*, հեռավար կրթությանը մասնակցածների 39%-ի համար դասերին մասնակցելու որևէ խոչընդոտ կամ դժվարություն չի եղել: Մինչդեռ 34%-ի համար խոչընդոտ է հանդիսացել ինտերնետի բացակայությունը կամ ցածր որակը, 20%-ի համար՝ համապատասխան տեխնիկայի բացակայությունը, 18%-ի համար՝ առողջական խնդիրները, և ևս 12%-ի համար՝ առանձնանալու հնարավորության բացակայությունը:

**Գծապատկեր 5.1. Ի՞նչ դժվարությունների/խոչընդոտների եք հանդիպել հեռավար կրթության կազմակերպման/հեռավար կրթությունից օգտվելու ընթացքում** (Բազմակի պատասխաններով հարց: Հարցվողներն ընտրել են ցանկից /եթե 2/4 կարդացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:)  
n=284




*Գծապատկեր 5.2-ը* ցույց է տալիս, որ 2021թ.-ի հարցվածների 48%-ի կարծիքով դասը/դասախոսությունը բովանդակային փոփոխություն է կրել հեռավար լինելու պատճառով (2020թ.-ի հարցվածների 52%-ի դիմաց): Այսպես պատասխանածների 45%-ը նշում է, որ շեշտն ավելի շատ ինքնուրույն աշխատանքի վրա է դրվել, իսկ 33%-ը նշել է, որ կրճատվել են առաջադրանքները (*Գծապատկեր 5.3*):

**Գծապատկեր 5.2. Արդյո՞ք Ձեր մասնակցությամբ դասը/դասախոսությունը բովանդակային փոփոխություններ կրել է հեռավար լինելու պատճառով: 2020 (n=374), 2021 (n=284)**




**Գծապատկեր 5.3. Եթե այո, ապա ինչպե՞ս (Բազմակի պատասխաններով հարց: Չարցվողները ընտրել են ցանկից /եթե 2/4 կարդացել է ցանկը/: Պատասխանները միավորված են:) n=137**




Ըստ *Գծապատկեր 5.4-ի*, 2021թ.-ին հարցվածների 49%-ը հեռավար կրթության առավելություններ չի տեսնում, մինչդեռ 29%-ը հեռավար կրթության առավելություն է համարում ժամանակի և 19%-ը՝ գումարի խնայումը:

**Գծապատկեր 5.4. Որո՞նք են ըստ Ձեզ հեռավար կրթության առավելությունները [Նշեք երեք հիմնական առավելություն] (Պատասխանները միավորված են)  
2020թ.՝ n=392, 2021թ.՝ n=284**




Մինևույն ժամանակ, ըստ *Գծապատկեր 5.5-ի*, հեռավար կրթությանն առնչվածների 39%-ը որպես հեռավար կրթության թերություն 2021թ.-ի հարցմամբ նշում է կենտրոնանալու խնդիրը, իսկ 27%-ը՝ կրթության ժամանակ աշակերտների/ուսանողների ձևական ներկայությունը՝ դասապրոցեսին չներգրավվելով: Հարցվածների ևս 22%-ն էլ գտնում է, որ հեռավար կրթության պայմաններում յուրաքանչյուր աշակերտին/ուսանողին ավելի քիչ ժամանակ է հատկացվում:

